ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5339-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գոհար Առաքելյանի լ/ա Կարեն Նիկողոսյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 2-ի հ.3288-Ա որոշումը վերանայելու մասին:

Վերոնշյալ որոշման հիման վրա՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Վերին Շենգավիթի 2-րդ փողոց հ.10/3 հասցեում գտնվող 13.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09102026-01-0093 վկայական):

Նշված որոշման 8-րդ կետով սահմանված շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի հաշվարկման համար սահմանված 15-օրյա ժամկետը՝ Գոհար Առաքելյանի կողմից բաց է թողնվել:

Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 2-ի հ.3288-Ա որոշման 5-րդ կետը՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով համարվել է ուժը կորցրած՝ Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 2-ի հ.3288-Ա որոշման 5-րդ կետով նախատեսված գումարը նույն որոշման 8-րդ կետում նշված ժամկետում չվճարելու փաստական հանգամանքի հիման վրա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ և 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերով, 59-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի հ.550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով, Երևան քաղաքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի հուլիսի 2-ի հ.3288-Ա որոշումը, հաշվի առնելով հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի վճարման հ.261016086597018 հանձնարարագիրը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/64638-26 եզրակացությունն ու Դ-115567-26 դիրքորոշումը.

1.Վերին Շենգավիթ 2-րդ փողոց հ.10/2 հասցեում գտնվող, Գոհար Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին կից՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Վերին Շենգավիթ 2-րդ փողոց հ.10/3 հասցեում գտնվող 13.9քմ մակերեսով հողամասը, որպես ընդլայնում, կառուցապատման նպատակով, սեփականության իրավունքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) Գոհար Առաքելյանին՝ սույն որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 6-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 532 231 /հինգ հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր երեսունմեկ/ ՀՀ դրամ և փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Երևանի քաղաքապետի անունից, Գոհար Առաքելյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Ընդունել ի գիտություն, որ հողամասի առուվաճառքի մասին պայմանագրի նոտարական վավերացման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են Գոհար Առաքելյանի միջոցների հաշվին:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ